ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/101 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով խոհանոցային կահույքի /3 դպրոցներ/գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 25.06.2025թ. ժամը 12:30-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Անահիտ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/101** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Ստարտ Օվեր» ՍՊԸ	kananyan01@mail.ru
2	«Սորրելի» ՍՊԸ	-
3	«Բի Թու Ջի» ՍՊԸ	b2gllc.am@gmail.com
4	«ՏաթՆար» ՍՊԸ	
5	«Էկո դեկոր» ՍՊԸ	-
6	«Նոար Գրուպ» ՍՊԸ ԱՁ	noargroupllc2gmail.com
7	«Բաղդասարյան 88» ՍՊԸ	bghda88@gmail.com

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կոդից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3. 1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Գնառաջարկներ

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջնական առաջարկված գինը ՀՀ դրամ		Մասնակցի կարգավիճակ
				Առանց ԱԱՀ	ԱԱՀ ներառյալ	
1	1	ԲԻ ԹՈՒ ՁԻ ՍՊԸ	23853430	14801220	17761464	
1	2	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ	23853430	15000000	18000000	
1	3	ՏԱԹՆԱՐ ՍՊԸ	23853430	18204884	21845860	
1	4	Ստարտ Օվեր	23853430	18403663	22084395	
1	5	ՆՈԱՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ	23853430 D	19000000	22800000	
1	6	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	23853430	100000000	120000000	Մերժված

1	7	ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ	23853430	460000000	552000000	Մերժված
2	1	ՆՈԱՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ	11797730	950000	1140000	
2	2	ՏԱԹՆԱՐ ՍՊԸ	11797730	9733127	11679752	
2	3	Ստարտ Օվեր	11797730	9831441.67	11797730	
2	4	ԲԻ ԹՈՒ ՋԻ ՍՊԸ	11797730	21797730	26157276	Մերժված
2	5	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	11797730	100000000	120000000	Մերժված
2	6	ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ	11797730	460000000	552000000	Մերժված
2	7	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ	11797730	14200000000	17040000000	Մերժված
3	1	Ստարտ Օվեր	4611080	3007777	3609332	
3	2	ԲԻ ԹՈՒ ՋԻ ՍՊԸ	4611080	3046290	3655548	
3	3	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ	4611080	3200000	3840000	
3	4	ՏԱԹՆԱՐ ՍՊԸ	4611080	3727289	4472746	

3	5	ՆՈԱՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ	4611080	4611080	5533296	Մերժված
3	6	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	4611080	100000000	120000000	Մերժված
3	7	ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ	4611080	460000000	552000000	Մերժված

5. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 313 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 10.07.2025թ.

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 «Բի Թու Ջի» և «Նոար Գրուպ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 «Ստարտ Օվեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես բացակայում է Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, նաև բացակայում են տեխնիկական բնութագրին կից տեխնիկական առաջադրանքները: Բացի այդ «Ստարտ Օվեր» ՍՊԸ-ի փոխկապակցված անձ «Գլոբալ Սպորտ» ՍՊԸ-ն՝ 31.05.2025 - 31.05.2027թթ ժամանակահատվածում գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այն դեպքում երբ «Ստարտ Օվեր» ՍՊԸ-ն սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն, Հավելված 1 դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 19-րդ ենթակետի համաձայն՝ «Ստարտ Օվեր» ՍՊԸ-ի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել.

«Բի Թու Ջի » ՍՊԸ –ին՝ **1-ին չափաբաժնի մասով,**

«Նոար Գրուպ» ՍՊԸ-ին ՝ **2-րդ չափաբաժնի մասով,**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6.2 կետը մերժել «Ստարտ Օվեր» ՍՊԸ-ի ներկայացված հայտը **3-րդ չափաբաժնի մասով**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել՝ «Բաղդասարյան 88», «ՏաթՆար», «Ստարտ օվեր», «Նոար Գրուպ» ՍՊԸ-ների հայտերը **1-ին չափաբաժնի մասով**, «Տաթնար», «Ստարտ Օվեր» ՍՊԸ-ների, հայտերը **2-րդ չափաբաժնի մասով**, «Բի Թու Ջի», «Բաղդասարյան 88», «Տաթնար» ՍՊԸ-ների հայտերը **3-րդ չափաբաժնի մասով**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.4 «Էկո դեկոր», «Սորելլի» ՍՊԸ –ի **հայտերը 1-ին չափաբաժնի մասով**, «Բի Թու Ջի»,«Էկո դեկորի»,«Սորելլի»,«Բաղդասարյան 88» ՍՊԸ-ների հայտերը **2-րդ չափաբաժնի մասով**, «Նոար Գրուպ», ՍՊԸ-ի, «ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ի, «Էկո դեկոր», «Սորելլի» ՍՊԸ-ների հայտերը **3-րդ չափաբաժնի** ամսով մերժվել են համակարգի կողմից գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին.

3.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.2 Հրապարակել պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, 3-րդ չափաբաժնի մասով գործընթացը չկայանալու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Ստարտ օվեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Արման Երանոսյան

---------- Անահիտ Հակոբյան

---------- Լիանա Խառատյան /քարտուղար/